

## ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻ ԸՆԹԱԶՈՒՄ

ԽԱԶԿԵՐԱՑԻ ՏՕՆԸ

Ամեն, Ա. Պատրիարք Հայրը<sup>(\*)</sup> այս  
առարի, Ա. Խաչի տօնին (Սեպտ. 30  
կիր.) հանդիսութիւններուն վայրը ա-  
ւեցուց իր ներկայութեամբ:

Առառուն Ն. Ամեն. Սրբազնութիւնը  
Ա. Պատարագ մատոյց Սրբոց Յակոբ-  
եանց Տաճարին մէջ և խօսեցաւ կրօ-  
նաշաւնչ քարոզ մը ընարան դնելով Պօ-  
ղողոս Առաքեալին սա՛ հաւասառումը. «Իր-  
րեն ՏՏԾԱԽԱԼ, եւ հանապազ ուրախ  
նի՛» (Բ. Իրնթ. Զ. 10), և ըստու —  
«Եւենքի հակասութիւններն են որ կ'ա-  
պահովին անոր նորոգումը, թէ ընական  
երիոյթներուն և թէ մարդկային գոյու-  
թեան բոլոր շրջաններուն մէջ: Ներքին  
նմանութեամբ մը, արտմութեան և  
ուրախութեան հակապատկերներն ալ  
իրարու կը յաջորդին մեր կրօնական  
զարգացումին ամէն մէկ վայրկեաննե-  
րուն, և այդ փոփոխ վիճակներուն շնոր-  
հիւ կը նորոգուի մեր հաւատքը: Խաչն  
ըլլալով նշան մը ցաւի և արցունքներու,  
եղա՛ծ է ու կ'ըլլայ նաև նշան մը ցնծու-  
թեան ու միթարութեան: Ատո՛վ է որ  
քրիստոնեան կը պահէ իր հոգեկան հա-  
ւասարակշռութիւնը, առանց անձնա-  
տուր ըլլալու այդ ներհակ տրամադրու-  
թիւններէն մէկին կամ միւսին: Այսպէս  
կ'ըմբռնենք մեր կեանքին համար խա-  
չին կտարած դերը, և ատո՛վ է որ մեր  
հոգիները ուրախ ըլլալէ չեն դադրի՞ երբ  
կը արտմինք ո՛րևէ վիշտի պատճառով»:  
(Սին, 1928 Հոկտ. - Նոյեմ., էջ 348):

## ԿՐՈՆԱԿԱՆ

“ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

ԵՒ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ”

«Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանիմ Քեզ,  
«Հոյր եւ Արքի եւ Ա. Հօգի, ամեն եւ անման թարին,  
«Արարի հեթակայ եւ մարդկան եւ ամենայն եղեց,  
«Ողացեա Քա արարած եւ ինձ բազմակիր»:

Ներսէս Շնորհալի Հայրապետի Հաւա-  
տով խոստովանիմ «աղօթաշարքին առաջին  
հինգ<sup>(\*)</sup> տուները, կ'ըսէինք մեր հափառ  
գրութեան մէջ, առաւելաբար հաւատոյ և  
պաշտաման վերաբերեալ կէտեր կը պա-  
րունակեն իրենց մէջ: Այլ բացարձութեամբ  
հաւատոյ տըւեալներ կը պատրաստեն զե-  
տինը որպէսզի աղօթաւորը բարձրանալ Առ-  
տուծոյ ներկայութեան Անոր մատուցանե-  
լու համար նախ պաշտամունք և ապա իր  
սրբին խնդրան քնները: Առաջին այս տունը  
սակայն բացառութիւն մըն է 24 տուններուն  
մէջ այնու որ գրեթէ ամբողջութեամբ հա-  
ւատոյ խոստովանանք և պաշտամունք է և  
միակ ընդհանուր խնդրանք մը ունի վերջին  
տողին մէջ, որ կը կրկնուի միւս բոլոր տու-  
ներուն մէջ:

Երբ կը ձեռնարկենք այս սքանչելի ա-  
ղօթաշարքին մէն մի տունը ընդլայնամի և  
պարզումի ենթարկել, մեր նպատակն է նախ  
շեշտել և վերջիշեցնել այս աղօթքի մէջ  
յայտնուած կրօնական ճշմարտութիւնները,  
և ապա անդրագառնալ նաև պաշտամունքի  
վերաբերեալ Կորդ մը գործնական և արա-  
րագական սովորութեանց՝ որոնք անտեսուե-  
լու կամ մասացութեան տրուելու վտանգին  
ենթարկուած են մեր եկեղեցւոյ անդամնե-  
րուն կողմէն:

Ներթին մօտեցումի մեր մեթուրը պիտի  
ըլլայ վերցնել իրաքանչչեւր տունի կարե-  
ւոր հաւասառութեան տրուելու վտանգին  
ենթարկուած են մեր եկեղեցւոյ անդամնե-  
րուն կողմէն:

«Հաւատով խոստովանիմ». Ներկայիս

(\*) Համորդ յօդուածի մէջ սխալմամբ տղա-  
գրուած է չորս (Սին, Յուլիս - Օգոստ., էջ 165,  
բ. սիւնակ, Ներքեն 13րդ տող):

(\*) Դուշեան Պատրիարք: